Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ ՈՒ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անուն, ազգանուն՝**
   Մարիամ Թարվերդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ վարչապետի աշխատակազմի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի միջազգային արբիտրաժներում և օտարերկրյա դատարաններում ՀՀ շահերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ավստրիայի Հանրապետություն, Վիեննա, 2023թ. հուլիսի 2-8-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**
   Գործուղման նպատակն էր ապահովել Հայաստանի Հանրապետության մասնակցությունը ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի (UNCITRAL) 56-րդ նստաշրջանին, որի ընթացքում Հանձնաժողովի դիտարկմանն ու ընդունման են ներկայացվել ներդրող-պետություն վեճերի լուծման հետ կապված բարեփոխումներով զբաղվող 3-րդ աշխատանքային խմբի աշխատանքների ընթացքում նախագծված առանձին փաստաթղթեր:

6. **Քննարկված թեմաները՝**
   2023թ. հուլիսի 3-21-ն ընթացող Հանձնաժողովի 56-րդ նստաշրջանի առաջին շաբաթվա ընթացքում՝ հուլիսի 3-7-ը, Հանձնաժողովի քննարկմանն ու հաստատմանն են ներկայացվել միջազգային ներդրումային վեճերը լուծող անձանց (արբիտրների և դատավորների) վարքագծի կանոնագրքերը և դրան ուղեկցող մեկնաբանությունները, ինչպես նաև ներդրող-պետություն վեճերի կարգավորման բարեփոխումների շրջանակներում հաշտարարության վերաբերյալ կարգավորումների նախագծային փաստաթուղթն ու ներդրումային վեճերի առնչությամբ հաշտարարության ուղեցույցը: Դեռևս քննարկման ենթակա բովանդակային հարցերն ամփոփելու նպատակով ձևավորվել է Կոմիտե (Committee of the Whole), որի կազմում պատվիրակները ներկայացրել են իրենց դիրքորոշումները նշված փաստաթղթերի, դրանցում ներառված հարցերի առնչությամբ ամենատարբեր հարցերի վերաբերյալ: Խմբագրական բնույթի հարցերն ամփոփելուց հետո՝ վերջնականացված փաստաթղթերը ներկայացվել են Հանձնաժողովի հաստատմանը:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Ա) Ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Հանձնաժողովի 56-րդ նստաշրջանի աշխատանքները մեկնարկել են հաշտարարության վերաբերյալ կարգավորումների նախագծային տարբերակի շուրջ քննարկումներով, որոնք կրել են բացառապես խմբագրական բնույթ: Միևնույն ժամանակ, քննարկվել է փաստաթղթի անվան հարցը՝ որպես վերջնական տարբերակ առաջնորդվելով «UNCITRAL Model Provisions on Mediation for International Investment Disputes» տարբերակով: Սույն փաստաթղթի, ինչպես նաև հաջորդիվ քննարկված հաշտարարության ուղեցույցի վերաբերյալ բովանդակային փոփոխություն-առաջարկներ Հայաստանի Հանրապետության անունից չեն ներկայացվել, իսկ քննարկումների ընթացքում առաջարկվող խմբագրական բնույթի այլ փոփոխությունների վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համաձայնություն ներկայացվել է չառարկելու եղանակով:

Այնուհետ, մեկնարկել են միջազգային ներդրումային վեճերը լուծող անձանց (արբիտրների և դատավորների) վարքագծի կանոնագրքերի (այսուհետ՝ «Կանոնագիրք» կամ «Կանոնագրքեր») ու դրանց ուղեկցող մեկնաբանությունների վերաբերյալ քննարկումները: Հայաստանի Հանրապետության անունից դիտարկումներ ներկայացվել են արբիտրների վարքագծի Կանոնագրքի առնչությամբ՝ հաշվի առնելով, որ դատավորների Կանոնագրքով կարգավորվում են, այդ թվում, ապագայում ստեղծվելիք ինստիտուցիոնալ դատական մարմնի շրջանակներում գործող դատավորների վարքագծի կանոնները, ինչի ստեղծման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունը դեռևս դիրքորոշում չունի: Չնայած Կոմիտեի նախագահողի մեկնաբանությանը, որ նշված Կանոնագիրքը կարող է կիրառելի լինել ներկայում գործող ընդհանուր 6 ինստիտուցիոնալ դատական մարմինների դատավորների նկատմամբ, հարցը մտահոգություն է առաջացրել մի շարք պետությունների շրջանակներում, այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության, Իրանի Իսլամական Հանրապետության և այլն՝ պայմանավորված այդ նույն հանգամանքով, որ Կանոնագրքի ընդունումը միտված է մի կառույցի շրջանակներում դատավորների վարքագծի կարգավորմանը, որի ստեղծման վերաբերյալ պետությունները դեռևս դիրքորոշում չունեն:

Արբիտրների վարքագծի կանոնագրքի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության անունից ելույթով ներկայացվել է դիրքորոշում ստորև հարցերի կապակցությամբ.

ա. IBA Guideline-ներին ընդհանրական հղում տալու հարցի առնչությամբ ներկայացվել է համաձայնություն՝ առանց օրինակների սահմանման, ինչի վերաբերյալ համակարծիք են եղել նաև այլ պատվիրակներ. ընդհանուր մոտեցումն այսպիսով ընդունվել է,

բ. առաջարկվել է դիտարկել Կանոնագրքի 4-րդ հոդվածի 2-րդից 4-րդ պարբերություններում «վեճի կողմեր» հասկացության ներքո պարզաբանել, որ այդ հասկացության ներքո խոսքը վերաբերում է այն կողմերին, որոնց մասնակցությամբ վեճի շրջանակներում արբիտրը նախորդիվ հանդես է եկել՝ հստակ հղում կատարելով «*նախորդ* վեճի կողմերի»-ին. առաջարկը, սակայն, աջակցություն չստանալով այլ պատվիրակների կողմից, չի ընդունվել և, ըստ Կոմիտեի նախագահողի մեկնաբանության՝ հարցի վերաբերյալ պարզաբանումը Կանոնագրքի մեկնաբանություններում սահմանելն ավելի ճիշտ է,

գ. առաջարկվել է պահպանել Կանոնագրքի 11-րդ հոդվածի առնչությամբ մեկնաբանության 78-րդ պարբերությունն այնպես, ինչպես կա՝ հաշվի առնելով, որ առաջարկված խմբագրության տեքստից պարզ չէ, թե ով է համարվում «ողջամիտ անձ», իսկ 78bis կետով առաջարկված «in the eyes of a disputing party» արտահայտությունը սուբյեկտիվ բնույթ է կրում և կարող է հանգեցնել անհիմն բողոքարկումների՝ միայն վեճերի կողմերից մեկի ընկալման հիման վրա: Առաջին առաջարկի վերաբերյալ համակարծիք է եղել Վիետնամը, իսկ երկրորդի առնչությամբ՝ որպես կոմպրոմիսային տարբերակ ԱՄՆ-ն առաջարկել է հանել նշված արտահայտությունը և առաջարկել նոր ձևակերպում: Ընդհանուր առմամբ, Քարտուղարության ներկայացրած խմբագրությամբ առաջարկն առավել աջակցություն է ստացել պատվիրակների կողմից: Ըստ այդմ, Հայաստանի Հանրապետությունը ևս համաձայնել է տեքստին՝ առաջարկելով դիտարկել «ողջամիտ երրորդ անձ» հասկացություն սահմանելու տարբերակը: Քարտուղարության ուսումնասիրություններից հետո՝ նշվել է, որ երկու եզրույթները հավասարապես կիրառելի են և, սակայն, նախընտրելի է տեքստում պահպանել «ողջամիտ անձ» տարբերակը:

Կանոնագրքերում այլ խմբագրական բնույթի փոփոխությունների և առաջարկների վերաբերյալ, ըստ անհրաժեշտության, համաձայնություն ներկայացվել է չառարկելու եղանակով:

Կոմիտեի քննարկմանը ներկայացված փաստաթղթերի քննարկումներից հետո UNCITRAL քարտուղարության կողմից կազմվել են վերոգրյալ փաստաթղթերի առնչությամբ զեկույցները դիտարկման և հաստատման համար: Կոմիտեի աշխատանքներն ավարտվելուց հետո Հանձնաժողովի հաստատմանն են ներկայացվել հրապարակման ենթակա տեքստերը:

Բ) Հանդիպումները.

Նստաշրջանին մասնակցությունը հնարավորություն ընձեռեց ձեռք բերել ու ամրապնդել արժեքավոր գործնական կապեր, ծանոթանալ այլ պետությունները ներկայացնող պատվիրակների հետ և քննարկել հետագա համագործակցության հնարավորությունները: Առավել արդյունավետ էին հանդիպումները այն պետությունների ներկայացուցիչների հետ, որոնք Հայաստանի նմանությամբ ունեին միջազգային արբիտրաժներով զբաղվող վարչություններ, որոնց հետ հետաքրքիր էր փորձի փոխանակումը:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանձնաժողովի 56-րդ նստաշրջանի ընթացքում հաստատվել/ընդունվել են ստորև փաստաթղթերը.

ա. UNCITRAL Model Provisions on Mediation for International Investment Disputes,

բ. UNCITRAL Guidelines on Investment mediation,

գ. Code of Conduct for Arbitrators in International Investment Dispute Resolution and Commentary,

դ. Code of Conduct for Judges in International Investment Dispute Resolution and Commentary:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները**.

Քննարկված թեմաների առնչությամբ առաջարկություններ հնչեցվել են ելույթների ընթացքում, որոնք մանրամասն նկարագրված են սույն հաշվետվության 7-րդ կետում:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը**.

10 հուլիսի 2023թ.